ԽՐԻՄԵԱՆԻ ԾՆՆԴԵԱՆ ՕՐԸ։ Նրանց, որոնք հետաքրքրված են իմանալու, թէ Խրիմեան Հայրիկի ծննդեան օրը ապրիլի 4-ին է, թէ ապրիլի 5-ին, յայտնում ենք, որ «Մուրճ»-ի հաղորդածը հիմնուում է Խրիմեան Հայրիկի մի կենսագրութեան վերայ, տպված «Արաքս» կիսամեայ հանդիսի երրորդ գրքում։—Կենսագրողը այդտեղ ասում է՝ «Խրիմեան Հայրիկը ծնուեց 1820 թ. ապրիլի 4-ին»։ Մենք բաւականաչափ ձեռնհասութիւն չունինք վճռելու համար, թէ որն է աւելի ճիշդը՝ «Մուրճ»-ի հաղորդածը, թէ Աղանեանցի հատուածական Օրացոյցի ցուցմունքը, որի վերայ մատնանիշ է լինում «Արձագանք»-ը, իբր արժանահաւատ աղբիւրի վերայ։ Կարծում ենք, սակայն, որ մի մարդու կենսագրութիւն գրողին կենսագրուածի ծննդեան ժամանակը աւելի լաւ պիտի յայտնի լինի։

ԽՐԻՄԵԱՆԻ 70-ԱՄԵԱԿԸ ՇՆՈՐՀԱՒՈՐԵԼ ԵՆ, որպէս մեզ տեղեկացնում են, բազմաթիւ թէ մասնաւոր անձեր և թէ հիմնարկութիւններ, ամեն տեղից, ուր նորա 70-ամեակի լուրը կարող էր ժամանակին հասնել, չը նայած որ տեղական մամուլից ապրիլի 4-ը փչեցրին իրանց ընթերցողներին միմիայն «Մուրճը» և «Արձագանքը», մինչդեռ ապրիլի 4-ից առաջ «Մշակ», «Նոր-Դար» և «Աղբիւր» ոչ մի բառով չը փչատակեցին Խրիմեանի մօտալուտ 70-ամեակը։

Բացուից, մեր տեղեկութիւնների համաձայն, ուղարկուեցին հեռագիրներ Մարդասիրական Ընկերութիւնից, հայր Եղիշէ Գեղամեանցից, հայ երիտասարդութիւնից և Բալախանի նաֆթահորերի հայ-կառավարիչների կողմից։

ՀԱՑՐ ՂԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ ՑՕԲԵԼԵԱՆԸ։ «Արձագանք»-ը իւր № 8-ում յայտարարում է հետեւեալը. «Հայ հասարակութեան սորանով յայտարարում է, որ Վենետկի Մխիթարեան միաբանութիւնը ներկայ տարուս մայիսի 13-ին (ըստ նոր տօմարի 25-ին) պիտի կատարէ Հ. Ղեւոնդ վ. Ալիշանի գրական գործունէութեան յիսնամեայ յօբելեանը»։

«Մուրճ»-ի խմբագրութիւնը ուրախ կը լինի, եթէ կարո-

դանալ առաջիկայ ամիսներից մէկում ապագրել մի քննադատական լօգուած հայր Ալիշանի գրական-գիտնական գործունէութեան մասին։

«ՄՈՒՐՃ»-ի ՈՏԱՆԱՒՈՐՆԵՐԸ։ Մի պարբերական հրատարակութիւն, որը ունի ոտանաւորների բաժին, և որը պարտաւոր է հաշիւ տալ նորագոյն սերնդի գրական արտադրութիւններից, նա չի կարող և պարտաւոր էլ չի տալ միմիայն chef-d'oeuvre-ներ, գլուխգործոց գրուածքներ։ Աշխարհքիս և ոչ մի ամսագիր, իւր բանաստեղծութիւնների բաժնում, մի հաւաքածու չէ բարձր բանաստեղծական գրուածների։ Վերցրէք ռուսաց, գերմանական, ֆրանսական և այլ աղգերի ամսագրեր և տեսէք, թէ նոցանում տպւող ոտանաւորներից քանիսն են կարողացել դառնալ գրականութեան մշտական սեպհականութիւն և զետեղուած ոտանաւորների հեղինակներից քանիսն են հռչակուած իբր բանաստեղծներ։—Շատ և շատ քչերը։ Ներկայ դարուս մէջ եղած են հաղարաւոր ոտանաւորիստներ, որոնք աչքատակցել են ամսագրերին, բայց ներկայ դարուս բանաստեղծների անունները միմիայն հատ-հատ կը գտնէք ամեն տղղի գրական պատմութեան մէջ։—Եւ ինչ կարելի է ասել ոտանաւորների մասին, նոյնը կարող ենք ասել վէպերի մասին։ Որպէս ամեն տեղ, նոյնպէս «Մուրճ»-ի նպատակը չի կարող և չը պիտի լինի տալ միայն ամեն քննադատութիւնից բարձր կանգնած վէպեր։ Խնդիրը նորանում չէ, թէ բոլոր տպւած վէպերը, բոլոր տպւած ոտանաւորները դերազանց գրուածքներ են թէ ոչ. խնդիրը նորանումն է, թէ «Մուրճ»-ում տպւած վէպերը, «Մուրճ»-ում տպւած ոտանաւորները որքանով են կապւում մեր կեանքի և գրականութեան պահանջների հետ և իրանց գեղարուեստական համեմատական գերազանցութիւնով, ուղղութիւնով և բովանդակութիւնով որքան ընդունակ են բեղմնաւորել և լաւ ոգով ներշնչել գրողներին։ Խնդիրը ուրեմն այստեղ ժամանակակից սերունդների վերաբերած բարոյական ազդեցութեան մասին է։ Եւ չը կայ մի աւելի հեշտ բան քան դերծ մնալ ամեն յարձակումներից. այդ այն կը լինէր, որ մենք կը տպագրէինք միայն յայտնի անուն և հռչակ վայելող բանաստեղծների գրուածները կամ թարգմանութիւնները։ Դորանով «Մուրճ»-ը իւր վերաբերը կը տարածէր այդ յայտնի անունները կրող մարդկանց հովանաւորութիւնը, իրանից խափ տալով պատասխանատուութեան մեծ մասը։ Այո, բայց այն ժամանակ «Մուրճ»-ը իւր կոչման ծառայած չէր լինիլ։ Մենք գերադասում ենք՝ «Մուրճ»-ը և նորա հետ մեզ ինքներնիս հա-

սարակաց քննադատութեանը ենթարկել է տոկալ նորա անարդար, անգամ թշնամական կարծիքներին, բայց դորանով իսկ մի բան աղատել, քան փախչել պատասխանատուութիւնից և ոչինչ չը ստեղծել և կամ եղածներին ոչինչ ուղղութիւն չը տալ։—Յատկապէս բանաստեղծութիւնների մասին մենք կ'ասենք այն, ինչ անցեալ տարուայ վերջը մենք արդէն ասել ենք՝ կայ մի լուրջ հասարակութիւն, որը հետևում է «Մուրճ»-ի բանաստեղծութիւնների բաժնին։ Ոչ թէ այդ հասարակութիւնը անպայման կերպով հաւանում է բոլոր ոտանաւորները, որ տպում են «Մուրճ»-ում. ընդհակառակը, հէնց այդ հասարակութիւնն է, որ ամենախիստ կերպով է վերաբերում դէպի «Մուրճ»-ի այդ բաժինը։ Բայց առանց պատճառի չէ, որ այդ հասարակութիւնը արժանի է գտնում հետաքրքիր ուշադրութեամբ հետևելու «Մուրճ»-ում տպուող բանաստեղծութիւններին, դրականութեան այդ ճիւղին, որ այնքան ու այնքան անխնամ էր թողած մեղանում, որի պտուղները այժմ տեսնում ենք մենք այլ և այլ Սաֆի-Սատիրների մէջ։—Իսկ մի բաժնի համար հասարակութիւն կազմելը—այդ արդէն մի հանգամանք է, որով մենք աւելի ենք ներշնչւում, քան այն մարդկանց կարծիքներով, որոնց ջանքը ամաչութիւն ստեղծելն է։—Մենք ինքներս շարունակելու ենք լինել անկեղծ, և «Մուրճ»-ի բանաստեղծութիւնների խիստ քննադատը, որպէս մենք ենք տեսնում, լինելու է «Մուրճ»-ը ինքը։

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ։ *Անցեալ № 3-ում, «Աւաղակների» դրախօսութեան մէջ (երես 430, առաջին սիւնեակ) մկունդ խօսքը բացատրած է մեզնից իբր «կարճ նիզակ»։ Ընթերցողներից մէկը կարծում է որ մկունդ նշանակում է այն, ինչ գռեհկօրէն անուանում են «թօպուզ»։*

ԳՐ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ԹՕՐԷԼԵԱՆԻ *առիթով, որ կատարուելու է մայիսի 6-ին, «Մուրճ»-ի գալ № 5-ի «Ամսուայ Քրօնիկ»-ում կը լինի թէ կատարուած եղելութեան և թէ մամուլի ու հասարակութեան վերաբերութեան գնահատութիւնը։*

Վերջին ժամին ստացանք՝

ԱՐԾՐՈՒՆԻ ԳՐԻԳՈՐ.—ԱՑՆՏԵՂ ԵՒ ԱՑՍՏԵՂ, Թիֆլիս, 1890 թ., Տպարան Տ. Նաղարեանցի. գինն է 10 կոպ.։

ՎՐԻՊԱԿ։ «Մուրճ» № 3, պ. Զմշկեանի լօգուածում, երես 361, 6-դ տողից չի շարած մի ամբողջ տող, այնպէս որ պէտք է լինէր՝... «ներկայացման օրը կասսայում կար միայն 4 ռուբլի, այնպէս որ մնում էր բաց 400 ռուբլու չափ»։

Խմբագիր-Հրատարակիչ՝ ԱՒԵՏԻՔ ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ